

# Իրավաբան մշակույթ

Չկա Հասարակության  
առանց իրավունքի  
Ubi societas ibi jus

ե ռ կ շ ա ր ք ա ք Ե Ր Բ  
թիվ 1 (21)  
2008 թ. հունվար 30

2008 թ. փետրվարի 19-ը կարևորագույն, փորձության օր է Հայաստանի համար: Հայաստանի ազգային համար: Ամեն մի անհատի, քաղաքացու համար, գալիք սերունդների համար: Այդ օրը բնորոշի Հայաստան աշխարհի իշխանը, ում կվտանակվի երկրի դեկրատիվ առաջնությունը: Այդ օրը ամեն մի բնորոշի իշխան է, քանզի իրենն է իրավունքի իշխանին ընտրելու:

Հետևաբար, Սուրբ Ներսես Շնորհալու՝ 830 տարի առաջ գրված «Թուրք ընդհանրականը» կարծես քեզ գրված է այսօրվա համար, առաջին հերթին վերաբերում է յուրաքանչյուր քաղաքացու, ընտրողի՝ «մարդկանց վրա գործավարություն անելու համար արդարամիտ ու արդարադատ մարդկանց ընտրել...»: Ուստի «Թուրք...»-ը վերաբերում է այն բոլոր ինքն ինքն իրենց իրավունքներին, ովքեր հավակնում են 5 տարի ստանձնելու Հայաստան աշխարհի դեկրատիվ առաջնությունը և ակնկալում բոլոր ինքն ինքն իրենց իրավունքներին և սիրով կտապալի նրանց պատասխանները՝ ի գիտություն ընթերցողներին:

Աստվածային պատուիրանների խրատը ուղղեք նաև ձեզ՝ աշխարհիկ կենցաղավարության ունեցողներին: Լսա՛ն եւ առաջ՝ իշխանների, որ մեր այս դժուար ժամանակներում տարբեր վայելում տիրում է զօրքերի եւ գավառների վրա՝ շատ, քե՛ք քիչ: Արաչում են՝ անհավաք մի եղեք Աստուծոյ օրենքներին, այլ, ինչպես դուք կցանկանայիք, որ ձեր ծառաները ձեր հրամանները հնազանդութեամբ եւ անբերի կտարանք, եւ ունեք հրամայաւածներդ եք որեւէ բան անկատար թողնեն, կպատուեն ձեր կողմը, նոյնպէս էլ դուք Տիրոջ ծառայեցէք երկրորդ եւ հնազանդութեամբ, քանզի բնութեամբ Աստուծոյ ծառաներ եք. որպէսզի իրեն Տիրոջ դէմ պատասխանատու չպատժուէք, այլ որպէս մտերմ ծառաներ պատիւ ընդունէք երկնաւոր Թագաւորից:

Արդ, առաջինը այս պատուիրանն ենք ասանում ձեզ. անիրաւութեամբ մի վարուէք հպատակների հետ՝ ծանր եւ դժուարակիր հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, այլ իւրաքանչիւրին օրենքով եւ ըստ իր կարողութեան չափի դատէք. յիշէք, «որ որ րա էք էլ Տուր ունէք երկնքում, եւ Նրա առջեւ աշատուրիւն չկայ» (Եփես. 2, 9), ինչպէս ասում է առաջելով:

Ոչ ոքի մի գրկէք եւ մի ճեղքէք արքայաներին ու տնանկներին, որպէսզի Աստուծոյ առջեւ չբողոքեն ձեր դէմ, եւ Աստուած էլ լսի ճրանց բողոքը, ինչպէս Սողոմոն իմաստունն է ասում. «Աղբաւորն քեզ անհիշելի պատճառ մի տուր» (տես Առաջ, Լ.10), որպէսզի նրա վարդիջք, նրան լսելով, քեզ չարկողէ շատուցի:

...Անիրաւութեամբ մի դատէք որեւէ մէկին, այլ ուղիղ դատաստան արէք, որպէսզի Աստուած էլ ձեզ քաղցրութեամբ դատի եւ ոչ՝ իստութեամբ: Կաշառքը, կործանող մէկին սիրելը, ստուերիւնն ու դիակաւորները կամ որեւէ մէկից պատուելիք պատիւը թող պատճառ չլինեն, որ դատի ժամանակ անհրաժեշտ արդարացնէք ու արդարի իրաւունքները խեղափոխէք, որպէսզի արանց պատճառով ձեր հոգիները արժանի չլինեն Աստուծոյ օրենքների անձեռն:

...Չէր աշխատաւորների վարձը բռնութեամբ մի կարէք, որպէսզի չնմանուէք նրանց, որոնց առաքելներն ու մարգարէները ամբաստանում են. «Չեզանցից գրկուածն արդարակում է, եւ հնձողների արդարակները հասան զօրութիւնների Տիրոջ ականքին» (Յակ. 5:4): Թող ձեզ բաւ լինի, որ նրանց վատատույլ հարստանում էք եւ չափից անելի փախկանում, քանզի նրանց բնութիւնը ձեռնից տարբեր չէ, այլ նոյն կալիք եւ շարժանք էք ստեղծուած. նոյնն էլ տերների եւ ծառաների, հարուստների եւ արքայաների աշխարհի գալու սկիզբը եւ աշխարհից էլ յեկելու վախճանը: ...Ուստի անցատու այս կեանքի համար մի կորցրէք յախտեմանակ կեանքը: Քանզի քեւ է Քրիստոս ուղտի՝ ասեղի ծակից անցնելու օրինակով ասաց, թե հարուստները դժուարութեամբ երկնքի արքայութիւն պիտի մտնեն (տես Մատթ. ԺԹ:24), սակայն եթէ ձեր հարստութիւնը Աստուծոյ կամքի համաձայն գործածք, դժուարիւնը ձեզ դիւրին կլինի:

...Իսկ նա, ով փոխանակ իրենց կարօտեալներին տալու, նրանց ունեցածն է յափշտակում եւ կողոպտում նրանց, եւ փոխանակ հիւրընկալ եւ յոգնած ծանփորներին հանգստացնող լինելու, գողակից է դառնում գողերի եւ ճանապարհին դարձանակ՝ նրանց, ունեք անմեղութեամբ գնում են իրենց ուղիղ ճանապարհով, եւ իր տունը լցնում է անիրաւ ալի ստացուածքներով եւ հարստանալ է կարծում... էլ չեմ իտում այն անձերի յանցանքների մասին, որով ոչ միայն անձերն են ունեցուածք են յափշտակում, այլեւ նրանց արիւնն են հեղում, որպէսզի նրանց վկայ չլինեն ունեցուածք յափշ-

տակողներին, եւ չեն մտաբերում, որ ամէն ինչ իմացող մէկ այլ Պատուար կայ, Ումից չեն կարող պահել իրենց գաղտնի չարագործութիւնները: Այսպիսի հարուստների մասին է, որ Քրիստոս իրաւամբ ասում է, թէ դժուար պիտի մտնեն երկնքի արքայութիւն, նրանց օքեւանը արքայութիւնը չէ, այլ՝ զեհեհի հուրը. ապրեցական անքուն որդը եւ յախտեմանկան տարտապրուք:

...Արաչում են ձեզ՝ բոլորի, որ հեռանաք կորստական այս գործերից: Ոչ ոք թող չարաբան մեղքերի պատճառները՝ ասելով. «Եթէ չգրկեմ եւ չափշտակեմ, մեր իշխանութիւնը չենք կարող հաստատուն պահել»: Այս մասին նախ հետեւեալն ենք ասում. եթէ իշխանութիւն ունեցողներին անկարելի լինէր Աստուծոյ հանդէպ լինել, ապա ինչպէ՛ս Սուրբ Գրքում յիշուած քաղաքներից եւ իշխաններից շատերը գովելի եղան Աստուծոյ եւ մարդկանց առաջ: Դարձեալ՝ եթէ, ըստ ձեր ասածի, անկարելի լինէր առանց գրկելու իշխել, այն ժամանակ իմաստունը պէտք է փախչէր անցատու իշխանութիւնից՝ անանց տանջանքներով աստանայի հետ չտանջուելու համար: Սակայն անհնարին չէ առանց անիրաւութեան իշխանութիւնը վարել, այլ՝ դիւրին եւ հեշտ՝ սիրողի ու կամեցողի համար, եւ մենք վկայում ենք Աստուծոյ առջեւ եւ երաշխաւորում բոլորին, որ եթէ մէկը իր տունը մաքուր պահի գրկանքներից եւ արդար վատատույլ չմիայն հաւաքի այնտեղ, թեւ թուայ, քե՛զ ասկաւ է, անելի շահեկան կլինի եւ պատճառ՝ հարստութեան, բան անիրաւաբար ձեռք բերուած շառք: Սողոմոն իմաստունը եւս նոյնն է յայտնում՝ ասելով. «Անձեք կայ անբարիշտների տանը, իսկ արդարների յարկերն օրիտուս են» (Առաջ, Գ:33): Քանզի անիրաւութեամբ ձեռք բերուած քիչը կրակի մնան այրում եւ ավալանում է իրաւունքով ձեռք բերուած շառք, քանզի գրկուածներից անիրաւու հաւաքուածք անձեղով եւ դառնութեամբ է, եւ արքայաների անձեղի հետ Աստուծոյ անձեղն էլ է մտնում գրկողի տունը:

...Դարձեալ՝ ասենք նաեւ այս, որ ստուերիւն ու խաբէութիւնը, որոնք, ըստ Քրիստոսի, չարիք՝ աստանայից են, թեւ բոլորին են վատում, բայց առանելապէս՝ մեծամեծերին եւ իշխաններին, քանզի փոքրը ջանում է ստուերեամբ իր խօսքը հաստատել եւ հաւատացնել, որովհետեւ անգոր է, իսկ մեծը, որ իշխանաբար կարող է իր ուզածը անել, անելի յանցատու է լինում, երբ արիամարիում է իրաւունքը:

...Դարձեալ՝ արաչում ենք՝ չլինի, որ բարկութիւնից դողած եւ անարդար իրաւունքով որոշում տաք՝ կամ մէկին պատժէք, կամ մտաւոր վիճի կայացնէք, քանզի Նոր օրենքը այս քանց չի թոյլատրում, իսկ Չին օրենքը թեւ թոյլատրում է իւրաքանչիւրին պատժով կամ մտաւոր դատել, բայց ոչ՝ անտեղի, այլ՝ ըստ յանցանքների արժանի լինելու: Իսկ եթէ, առանց օրենքի դատելով, մարդկանց անիրաւաբար սպանէք ու պատժէք, հաստատ իմացէք, որ Պատասխանի օրը Աստուած պիտի պահանջի ձեզանից սպանուածների արիւնը ու պատժուածների կորուած անդամները:

Այս պատուէրը եւս ասանում ենք ձեզ. վրձնաւու եւ քեւանդիտի մի եղէք, որի համար Եսայի մարգարէն նախատում է Իսրայէլի իշխաններին (տես Եսայի Ա 23), այլ, ըստ Քրիստոսի պատուիրանի, եղէք մերող եւ համբերող բոլոր նրանց հանդէպ, ունեք ձեր դէմ մեղացնել են, որպէսզի ինչ էլ քաղցրութիւն ու բարեխոսութիւն ընդունէք նրանից՝ ըստ խօսքի, թէ՛ «Որ խոսէք, եւ չէք դատուի (մի պատժէք), եւ չէք պատժուի), որովհետեւ (ինչ դատաստանով որ դատէք, նրանով պիտի դատուէք) եւ ինչ չափով որ չափէք, նրանով կչափուի ձեզ» (Մատթ. Է:1):

## ՉԱՅՆ ԱԵԾԱՅ

Ձեր երկրի վրայ չար եւ անիրաւ գործակարներ եւ գաւառապետեր մի՛ նշանակէք, որպէսզի նրանց գործած անիրաւութիւնների պատճառով դուք էլ նրանց հետ չդատուէք Աստուծոց. այլ մարդկանց վրայ գործակարութիւն անելու համար արդարամիտ ու արդարադատ մարդկանց ընտրեցէք, որպէսզի արքունիքի սահմանած իրաւունքները չխնդրեն վատակարներին՝ մի փոքր կաշառքի փոխարէն զիջելով բազումը, կամ իրենք գողանան, եւ նրանց չնեղեն եւ հրամայածից անելի գանձեն, քանզի երկուսն էլ անիրաւութիւն են Աստուծոյ համար: Այլ այնպիսի իրաւադատ լինեն, որ կայսրինը տան կայսրին եւ Աստուծուն՝ Աստուծուն (Մատթ. ԻԲ:21):



Սուրբ Ներսես Շնորհալի

## Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

Իրավունքը և մարդու իրավունքները աշխարհում –	էջ 2
Յեռանկարում՝ ժողովրդավար շայաստան	էջ 3
Չմեռային հավաքով սկսվեց Մարդու իրավունքների հայկական դպրոցի տասներեքերորդ ուսումնական տարին	էջ 4
Ուղերձ շայաստանի շանրապետության նախագահի թեկնածուներին	էջ 5
Չուշ-համերգ՝ մկրոված էլիզա Գյուլեսերյանի ծննդյան 85-ամյակին	էջ 6
Չպարտությունը մահացու մեղք է...	էջ 7
Սրբապատկերի խորհուրդը	էջ 7
Իմ բաժին քարը Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին	էջ 8
Տեղեկությք, ազդ, հայտարարություններ	էջ 8



# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

## ԺՆԵՎԻՑ ԴԱՎՈՍ ԿՈՒՂԵՎՈՐՎԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՅՔԸ

Ժնևում կայացավ ՄԱԿ-ի ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի (ՈԿԿՀ) գլխավոր վեճաժողովը

ՄԱԿ-ի խորհրդատվական կարգավիճակ ունեցող ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի (ՈԿԿՀ) 23-րդ գլխավոր վեճաժողովը զեղափակվեց 2007-2010 թվականների համար նոր ղեկավար խորհրդի ընտրությանը:

Նախագահ ընտրվեց Լիբերտտո Բուիստան (Եկեղեցու և հասարակության գլխավոր խորհրդից), ընտրվեցին նաև խորհրդի 20 անդամներ:

Համաժողովում մասնակցում էին աշխարհի ավելի քան 20 երկրներից ժամանած 170 ՈԿԿՀ-ների շուրջ 300 ներկայացուցիչներ:

Համաժողովի օրակարգային հարցերը վերաբերում էին հետևյալ թեմաներին.

- Ժնևից Դավոս տանող Մարդու իրավունքների հաշվետվողականության գնացքը.
- Մարդու իրավունքների կրթությունը և դասավանդումը.
- Քաղաքակրթության ճգնաժամի այլընտրանքը:

Լիակազմ միատեղի և համագործակցային կլոր սեղանների, համաժողովի օրակարգային հարցերի և ներկայացված նախնական զեկույցների հիման վրա Գլխավոր վեճաժողովը քննարկեց և ընդունեց Գործողությունների կոչ, որը հետագա 3 տարիների համար երրուկ է սահմանում ՈԿԿՀ-ների համաժողովի անդամների և քաղաքացիական հասարակության համար:

Կոչի համաձայն՝ հարկավոր է խթանել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով սահմանված արժեքների կիրառությունը Կառավարությունների, ՄԱԿ-ի գործակալությունների և քաղաքացիական հասարակության կողմից:

Ընդ որում՝ չափազանց կարևորվում է քաղաքացիական հասարակության դերը՝ կոչ անելով պահպանել անկախությունը և իշխանություններին ճշմարտությունը բացահայտորեն ասելու կարողությունը: ՈԿԿՀ-ները պետք է համագործակցեն Կառավարությունների, ՄԱԿ-ի գործակալու-

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ**

Հունվարի 8 - Գրագիտության միջազգային օր  
Հունվարի 27 - Հոլոքոստի զոհերի հիշատակի միջազգային օր

թյունների և մասնավոր հատվածի հետ՝ ընդհանուր արժեքները գործնականում կիրառելու նպատակով:

ՈԿԿՀ-ն որպես ՈԿԿՀ-ների «ընտանիք» և քաղաքացիական հասարակության զարգացման խթան, պետք է հասարակությանն աջակցի ճշմարտությունը բարձրաձայնելու խնդրում՝ խթանելով իշխող օլակների հետ փոխադարձ կապը՝ արդարացիորեն և հավասարապես ապահովելով տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև աջակցի ճշմարտությունը բարձրաձայնողներին՝ բաց քննարկումներ կազմակերպելով:

Վերոնշյալ արդյունքներին հասնելու համար ՈԿԿՀ-ն պետք է դառնա ավելի ընդգրկուն՝ ապահովելով ավելի հզոր տարածքային և միջերեսային ներկայացուցչություն:

### ԻՐԱՔ

#### 151000 սպանություններ երեք տարվա ընթացքում

Իրաքի կառավարության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից համատեղ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Իրաքում 2003 թ. մարտի և 2006 թ. հունիսի միջև ընկած ժամանակահատվածում արժանագրվել է սպանության 151.000 դեպք:

Տվյալներն ստացվել են Իրաքի շուրջ 1.000 շրջաններում ու գյուղերում անցկացված հարցումների հիման վրա: Բացահայտվել է, որ 2003 թ. մարտից բռնությունն Իրաքում սեռաստիպականության և 15-59 տարեկան տղամարդկանց մահվան հիմնական պատճառն է: Ըստ ուսումնասիրության միջին հաշվարկային տվյալների՝ ներխուժումից հետո առաջին տարվա ընթացքում օրական սպանվել են Իրաքի 128 բնակիչներ, երկրորդ տարվա ընթացքում՝ 115, երրորդ տարում՝ 126: Սպանությունների կեսից ավելին կատարվել են Բաղդադ քաղաքում:



հայտնելու իր քաղաքական դիրքորոշումը:

Ընտրություններին հետևել են մոտ 85 խորհրդարանականներ, ԵԱԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի, ԵԱԿ խորհրդարանական վեճաժողովի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեճաժողովի և Եվրոպական խորհրդարանի 340 կարճաժամկետ դիտորդներ:

Եվրոպական խորհրդարանի պատվիրակության ղեկավարն ընտրությունները բնորոշել է որպես ևս մեկ քայլ Վրաստանի երիտասարդ և դեհեա դյուրաբեկ ժողովրդավարության կայունացման ուղղությամբ:

Չնայած ժամանակի սղորթյանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը միանգամայն արիեստավարտ կերպով էր կազմակերպել ընտրությունների ընթացքը՝ իրականացնելով ընտրագնացվածի նախնական ուսուցանման կայանավայ ծրագրեր: Այնուամենայնիվ, վիճահարույց հարցերում հանձնաժողովի անդամները հաճախ խախտել են չեզոքություն պահպանելու պահանջը: Արձանագրվել են նաև սպառնալիցներ ու ճնշման գործադրման բազմաթիվ դեպքեր, որոնց մի մասն ապացուցված է փաստերով: Հասարակական բարեգործական ծրագրերի իրականացումը հաճախ ուղեկցվել է նախկին նախագահի օգտին քարոզներով:

Դիտորդված ընտրական տեղամասերի մեծ մասում ընտրությունները կազմակերպված ու հանդարտ են ընթացել, սակայն գեր չեն մնացել խախտումների դեպքերից: Ընտրական որոշ տեղամասերում վիճակը նույնիսկ քառասային է եղել, ծագել են ընթացակարգային խնդիրներ: Ընտրողների ցուցակը հենց ընտրության օրը համալրվել է մոտ 5 տոկոսով: Դիտորդները քննադատել են ձայների հաշվառման գործընթացը՝ դանդաղության և ընթացակարգային թերությունների պատճառով:

միջոցների համակարգում բարեփոխումներ, մասնավորապես խոշտանգումների դեմ գործողությունների ձեռնարկում: Իրեն հանը կարևորեց երկրում Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի գործունեությունը, ինչպես նաև օրենսդրությանը ապահովվող տեղեկատվական ազատությունը, որպեսզի քաղաքացիները, իրազեկ լինելով, կարողանան կողմնորոշվել համապատասխան որոշումներ կայացնելիս:

Տիկին հանը նշեց, որ Բանգլադեշում Միջազգային համաձայնագրով կազմակերպության գործունեությունը երկար պատմություն ունի. մասնավորապես, կազմակերպությունը համագործակցել է պաշտպանների և լրագրողների հետ՝ մասնակցելով ազատության և խոշտանգումների և այլ հարակից հարցերում:

Մեկնաբանելով Միջազգային համաձայնագրով կազմակերպության առաջիկա քարոզարշավը՝ համուն մարդկային արժանապատվության, տիկին հանը սասց, որ բոլոր մարդկանց հավասարության և արժանապատվության ապահովումն իրենց կազմակերպության գործունեության առաջնությունն է:

#### ՄԱԿ-ի Դարձուրի նորաստեղծ զինված ջոկատը պետք է համալրվի



Մտահոգված լինելով Դարձուրում Աֆրիկյան միության (ԱՄ) և ՄԱԿ-ի միացյալ խաղաղապահ զորամիավորման անբավարար պատրաստվածությունը՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Դան Գի ՍուՆը կոչ է արել ՄԱԿ-ի անդամ երկրներին համալրել զորամիավորումը զինված ուժերով՝ 9.000 զինծառայողների թվով հասցնելով 26.000-ի, և համապատասխան սպառազինությանը մասնավորապես ավիացիոն ռեսուրսներով:

Դարձուրը Արևմտյան Սուդանում գտնվող տարածաշրջան է, որտեղ կառավարական զորքերի և ապստամբ խմբերի միջև 2003 թ. բռնկված հակամարտության հետևանքով սպանվել է ավելի քան 200.000 մարդ, իսկ շուրջ 2.2 միլիոն մարդ տեղահանվել է:

Բացի այդ՝ Սուդանի և Չադի միջև առկա լարված հարաբերությունների առնչությամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կոչ է արել երկու երկրների ղեկավարներին գերե մնալ ռազմական ուժի գործադրումից, ինչն էլ ավելի կբարոյացներ իրավիճակը:

Դարձուրի ԱՄ-ՄԱԿ միասնական զորամիավորման հատկ ներկայացուցիչ Դորոթի Ադաբան իր երեքին կոչ է արել Չադի և Սուդանի իշխանություններին «գաղափարապես դրսևորել, վերսկսել ընդհատված երկխոսությունները և հավակտարին մնալ միմյանց միջև առկա համաձայնագրերում անբարկված պարտավորություններին»:

### ԱՆԴՐՎՈՎՎԱՍ

#### Վրաստանում նախագահական ընտրությունների նախնական գնահատականը



Ընտրությունների միջազգային դիտորդման պատվիրակությունը հանդես է եկել նախնական միասնական հայտարարությամբ՝ եզրակացնելով, որ 2007 թ. հունվարի 5-ին Վրաստանում կայացած նախագահական ընտրություններն, ըստ էության, անցել են ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին համապատասխան, սակայն ի հայտ են եկել նաև լուրջ խնդիրներ, որոնք պետք է ամհասպար լուծում ստանան:

Երկրում առաջին անգամ իրապես մրցակցային հիմունքներով կայացած այս նախագահական ընտրությունները հնարավորություն տվեցին վրաց ժողովրդին արտա-



Բանգլադեշում կայացած ոչ կառավարական կազմակերպությունների հանդիպման ընթացքում Միջազգային համաձայնագրով կազմակերպության գլխավոր քարտուղար Իրեն հանը հայտնեց, որ կազմակերպությունը Բանգլադեշում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու պարտավորություն է ստանձնել: Նա նշեց, որ երկրում ձևավորվել է անապտոզիկոսյան մթնոլորտ՝ ճկատի ունենալով պետության կողմից մարդու իրավունքների խախտումների համար պատասխանատվության ապահովման բացակայությունը, որի վերացման համար անհրաժեշտ են ուժեղ և անկախ դատական համակարգ, իրավապահ մար-

# Մենք՝ քաղաքացիական Հանարակույթյունը

# ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ՝

# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ



ՈՍԿԵ ՄԻՋԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Խորագրի ներքո այս անգամ ներկայացնում ենք Լոռու մարզում նորաստեղծ «Ոսկե Միջին-հասարակական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

- կազմակերպել սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական, բնապահպանական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրեր և միջոցառումներ.
- ծավալել համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և առևտրային կազմակերպությունների հետ.
- նպաստել խոցելի խմբերի խնդիրների վեր հանման և լուծման գործընթացին.
- նպաստել հասարակության մասնակցությունը հանրային կառավարման գործընթացին.
- հատկացնել հատուկ ուշադրություն անապահով խավին, ծերանոցներին, մանկատներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին և հաշմանդամներին:

Կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են

- օրենքով սահմանված կարգով նպաստել ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում.
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրականացնել հասարակական վերահսկողություն.

- ծավալել համագործակցություն միջազգային կազմակերպությունների, հարևան երկրների հասարակական կազմակերպությունների հետ դրանով նպաստելով տարածաշրջանում խաղաղության պահպանմանը.
- ստեղծել առևտրային կազմակերպություններ և դրանցից ստացված եկամուտներն օգտագործել կազմակերպության կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման նպատակով:

ձեռնությունների կենտրոնը» գրանցված է ՀՀ Կենտրոն/հյուսիսային մասնաճյուղում և համագործակցում է Հայկական սահմանադրական իրավապաշտպան կազմակերպության, Վանաձորի բնապահպանական Օրիուս կենտրոնի, Լոռու մարզի Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն ՊՈՒԿ-ի, Ազգային ժողովրդավարական ինստիտուտի վանաձորյան գրասենյակի, այլ հասարակական կազմակերպությունների, հայաստանյան տարբեր ՁԼՄ-ների, պետական և ոչ պետական մարմինների, ինչպես նաև բազմաթիվ քաղաքացիների հետ:

2007 թ. մայիս ամսից կազմակերպությունը իր գործունեությունը իրականացնում է իր ռազմավարությամբ սահմանված ժամանակացույցով: Ունի նաև դրամահավաք խումբ:

Մինչ օրս կազմակերպությունը իր գործունեությունը իրականացրել է սեփական միջոցներով և համագործակիցների օժանդակությամբ:

Հավատարիմ իր առաքելությանն ու լինելով հետևողական այն իրականացնելու գործում՝ կազմակերպությունը իր մեկամյա գործունեության ընթացքում արդեն հասցրել է համոզեալ բազմաթիվ սոցիալապես անապահով ընտանիքների օրինական շահերի պաշտպանությանը:

2007թ. հոկտեմբեր ամսին կազմակերպության կողմից ՀՀ Կենտրոն/հյուսիսային մասնաճյուղի օժանդակությամբ



ՂՈՎՐԴԱՎԱՐ ԴԱՅԱՍՏԱՆ

կազմակերպվեց «Մարդու իրավունքներ» խորագրով սեմինար:

Կազմակերպությունը 2007 թ. նոյեմբեր ամսից սեփական նախաձեռնությամբ իրականացնում է հակակոռուպցիոն ծրագիր:

«Ոսկե Միջին-հասարակական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը պատրաստ է համագործակցել բոլոր այն կառույցների և ֆիզիկական անձանց հետ, ովքեր գործում են կամ պատրաստ են գործել ի շահ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի:

## ՆԱՄԱԿ ԽՄԱԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

# «Հայերս հարս ենք ընդունում օջախ՝ ընտանիք կազմելու նպատակով...»



Հարգելի խմբագրություն

Ցանկանում եմ խստիվ ՀՀ ընտանեկան օրենսգրքի, մասնավորապես նրա՝ 26-31 հոդվածներով նախատեսված ամուսնական պայմանագրի շուրջ:

Ցանկալի կլինեք, որ մեր օրենսդիրներն այս ոլորտը կարգավորեն իսկ ֆրանսիական օրենքներից արտագրությամբ չզբաղվելին: ՀՀ Ազգային ժողովը, փաստորեն, գրառվում է այլ երկրների օրենսդրությունը հայերենացնելով: Սակայն ինչու՞ ենք ձգտում վերացնել դարերի

փորձությունն անցած ազգային ավանդույթները:

Մենք՝ հայերս, հարս ենք ընդունում օջախ՝ ընտանիք կազմելու նպատակով և չենք մտածում դրա քայքայման հնարավոր տարբերակների մասին: Այս հարցերում տարբեր են ֆրանսիացու, իտալացու, պորտուգալացու և հայի մտածեակերպերը:

Էլ ի՞նչ հնազանդության, խոնարհության և հետևաբար նաև սիրո ու երջանկության մասին կարող է խոսք լինել, եթե գրիչը ձեռքն առած հարսը պայմանագիր պետք է ստո-

րագրի իր ապագա ամուսնու հետ: Մի՞թե կարող է կայուն լինել նյութապաշտոնյան հիմքի վրա ստեղծված ընտանիքը: Մի՞թե պարզ չէ, որ այդպիսի հարսը պատկառության արարողության ժամանակ ստում է՝ քահանայի հարցին դրական պատասխանելով: Նա վաղ թե ուշ իր պայմանագիրը ձեռքն առած վազելու է դատարան:

Եթե ֆրանսիացին կարող է իր ապագա կնոջն առաջարկել ամուսնական պայմանագիր կնքել, իսկական հայ մարդն իրեն թույլ չի տալիս այդպիսի քան: Պատճառն ամենին ինչ էլ «քաղաքակրթության կամ զարգացած լինելու պատշաճ մակարդակի» պակասը չէ. պարզապես ֆրանսիացու կողմից նման փաստաթուղթ ընկալվում է որպես սովորական երևույթ:

Հայերիս մտո իրողությունն այլ է: Միմյույե ցանկացած օրենք հաստատելիս կամ թեկուզ «արտագրելի» ամերածեղ է (նախ հաշվի առնել տվյալ ժողովրդի անցած ուղին, դարբերով ամուսնոված ավանդույթները, ազգային առանձնատկությունները, նոր միայն ընդունել և գործարկել այն):

Հարգանքը՝ Է. ՉԱԹՅԱՆ  
Արագածոտնի մարզ, գյուղ Օրգով

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՄՆ ԳԱԼԻԲ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Համաձայն Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի՝ ամերիկաբնակ հայերի դերն ԱՄՆ գալիք նախապահական ընտրություններում ավելի որոշիչ կլինի հանրապետական և Ժողովրդավարական կուսակցությունների կողմից առաջարկված թեկնածուների միջև ընտրության հարցում:

Վերջին շաբաթների ընթացքում կոմիտեն թեկնածուներից յուրաքանչյուրին ուղարկեց հայ-ամերիկյան խնդիրների, ԱՄՆ և Հայաստանի կառավարությունների կազմագրող հարաբերությունների վերաբերյալ հարցաշար, որը պարունակում է 19 հարց, այդ թվում՝ հայկական ցեղասպանության ճանաչմանը, ԱՄՆ-Հայաստան տնտեսական, քաղաքական և ռազմական հարաբերություններին, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը, թուրքական և արդեթաթական շրջափակմանը, ինչպես նաև Դարձուրի ցեղասպանությանը:

Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի արևելյան մասի գործադիր տնօրեն Կարինե Քիրաջյանը նշեց, որ ամերիկաբնակ հայերը պետք է ընտրական տեղամասեր մտնեն լավ իրազեկված՝ պատրաստ լինելով իրենց ծայրը տալու այն թեկնածուին, ով լավագույնս կներկայացնի համայնքի տեսակետներն ու արժեքները:

# ՉՄԵՌԱՅԻՆ ՀԱՎԱՔՈՎ ՍԿՍՎԵՑ ՄԱՐԴՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԴ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՏԱՐԻՆ

2008 թվականի հունվարի 11-ին Վանաձորի քաղաքամերձ «Ծիծեռակ» ճամբարում փրկի ունեցող Մարդու իրավունքների հայկական դպրոցի (ՄԻՄԻ) 2008 թվականի ուսումնական փուլով ձևափոխված հավաքի բացման շնորհանդեսը: Ողջույնի խոսքով հանդես եկան ՏՄԿԿԿ Գերակիսիների գլխավորնախագահ և թևավորման կենտրոնի (ԳԿԿ) փոխնախագահ Մանուկ Մարգարյանը:



և ՏՄԻԿ նախագահ Գևորգ Մանուկյանը: Նրանք ելույթին ՄԻՄԻ խորացված դասընթացի առանձնահատկությունները և մասնակիցներին մտաթեզին արդյունավետ աշխատանք: Երայրի խոսքում պարունակված է Մ. Մարգարյանը, դիմելով մասնակիցներին, մասնավորապես նշեց. «Ես փորձ-ինչ պարզապարզ կամ, որովհետև հանդես եմ գալիս որպես Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ և կարող եմ հավաստեմ, որ ՏՄԻԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներն անվազն ճայատարածում արժեն բավականին հայրենի են և նախարարության կողմից ընդունելի: Այլևհետև, չնայած Կրթության ազգային ինստիտուտը շատ ակտիվ է արդյունավետ դասընթացներ է կազմակերպում, պարահանվան չէ, որ հենց մարդու իրավունքների դասընթացների, կարելի է նույնիսկ ասել, գլխավոր պարամիտանություն ՏՄԻԿ-ն է: Մենք վաղուց ենք արդեն համագործակցում և հույս ունենում դուր ես շատ արագ կմիանաք այդ ամբողջ շարժմանը, ինչի հիմքը ՏՄԻԿ-ն է դրել: Երբ կարևոր պահ կա, որ կցանկանալի որպես առանձնահատկություններ նշել: Նախ՝ «Իրավունք» առարկայաչափի դասընթացի հազվագյուտ է մարդու իրավունքների ուսուցիչի մասնակցության րովանդակությունը: Երբորդ լուրջ առանձնահատկություններ կազմակերպման մեթոդը և, երբորդ, որ ինձ համար ավելի կարևոր նշանակություն ունի, և առիթը բաց չեն բողոքում հավակալես մտաբանելու, այն ամբողջային համակարգն է, որով ՏՄԻԿ-ը հանդես է գալիս և ինչ-որ իմաստով քարոզում: Այդ ամբողջային համակարգը շատ անհրաժեշտ է, կարևոր, գնահատելի, և որպեսզի է, որ ՏՄԻԿ-ի կողմից այն պարզապես կերպարված լինի: Գու ոչ միայն մեր կրթությանը, այլև հասարակությանը և խիստ անհրաժեշտ: Ողջույնով բոլորիդ՝ ես ոչ միայն գտնվում եմ, այլև հույս ունենում, որ այս դասընթացի ընթացքում որպես հիմնական արդյունք՝ ձեզանից յուրաքանչյուրի մեր փրկի կունենան մանկավարժական աշխատակազմի Եվան փոփոխություն: Ցանկանում եմ ձեզ արդյունավետ աշխատանք, հանդուգն ու համարձակ մրցակցություն»:

Տունվարի 10-30-ը 20 օր շարունակ «Իրավունք» առարկայաչափի շուրջ 30 ուսուցիչներ ճայատարանի ինք մարզերից և մայրաքաղաքից ուսումնասիրեցին «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պարտություն և իրավունք» առարկաները:

ՄԻՄԻ մեկնայա խորացված դասընթացի ուսումնասիրության բաղկացուցիչ մաս են կազմում ևս 2 ասկա հավաքները (7-ական օր փակաթյամբ), ինչպես նաև 11-ամսյա հետադարձ կազմակերպում: Դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպվում է համագործակցային ուսուցման եղանակով:

Ուսուցումը կազմակերպում է իրավաբանները և ՄԻՄԻ ուսուցանողները (որպես ուսուցանող հրավիրվում են նաև ՄԻՄԻ փոքրեր փոքրիկ լավագույն շքանակավարները), ՏՄԿԿ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մեթոդականների և փորձագետների թիվը: Տավաքի ընթացքում Կրթության ազգային ինստիտուտից գործողված փորձագետները մասնավորապես մեկ շաբաթ հեղինակ դասընթացի՝ դիտորդման նպատակով: Դասընթացի իրականացում է «Ճայատարածում իրավունքի մշակույթի գաղափարներն ուղղված մարդու իրավունքների կրթություն և հանրային փրկակարգություն» ծրագրով՝ Կրթության և ճայատարածում երկրպագու հանձնաժողովի պարզապարզության ապակցությունը:

Թերթի աշխատակիցները կրթության դասընթացի կազմակերպիչների, փորձագետների, մեթոդագետների և սովորողների հետ:

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ 30 ԿԿԿ ԳԿԿ տնօրեն

Յերմինե Բարսեղյան – Պարոն Մարտյան, ի՞նչ ամանձնատարություններ ունի այս դասընթացը:

Մանուկ Մարտյան – Դասընթացը մի շաբաթ առանձնահատկություններ ունի կրթության ոլորտի մյուս հաստատությունների կազմակերպած դասընթացների համեմատ: Ինչպես նախորդ, այնպես էլ այս դասընթացի ընթացքում շեշտադրվելու է ուսուցման տեխնոլոգիան: Բոլորովին նոր սկզբունքներով, համագործակցային գաղափարախոսության սկզբունքների և հիմնադրույթների համաձայն կազմակերպվեն այս դասընթացները: Կարծում եմ՝ ուսուցիչների համար մորթույթ կլինի և կհետաքրքրի: Դասարանը էլ մի քիչ դժվարանալով սկզբնական շրջանում, բայց ինչպես փորձն է ցույց տալիս, արդյունքում եթե ոչ բոլորը, ապա շատերը դասնում են համագործակցային ուսուցման ջատագովներ:

3. Բ. – Եվ ո՞րն է նոր մտեցման համագործակցային ուսուցման եղանակը: Մ. Մ. – Դասընթացի ուսուցման ընթացքում ուսումնական խմբի բոլոր անդամները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ՝ ստուգելով միմյանց, սովորեցնելով մեկը մյուսին: Արդյունքում յուրաքանչյուրը մասնակց կազմի ակտիվ է լինում ուսումնական գործընթացում, ոչ թե սոսկ պասիվ լսում է: Բացի դրանից յուրաքանչյուրը մասնակցի ստացած արդյունքը, փաստորեն, մյուսների հետ համագործակցելու արդյունք է: Այդ իմաստով յուրաքանչյուրը մասնակցի իր ներդրումն է ունենում:

3. Բ. – Տարիների փորձն ի՞նչ է ցույց տալիս. արդյունավետ է արդյոք համագործակցային ուսուցման մեթոդաբանության կիրառությունը հանրակրթական համակարգում: Մ. Մ. – 3ՄԻԿ-ի փորձն մի քանի ամսվա ընթացքում է, որ դա շատ արդյունավետ մեթոդ է: Եթե մի քանի տարի առաջ 3ՄԻԿ-ը ընտրված լիք էր այդ մեթոդը և հետևում դրա արդյունավետությանը, այսօր այն դարձնել է նրա հիմնական աշխատանք: Իսկ եթե դարձնել է հիմնական աշխատանք, նշանակում է՝ անցած տարիներն իզուր չեն անցել, և

փորձն արդարացվել է:

3. Բ. – Ի՞նչ է նախատեսվում առաջիկայում:

Մ. Մ. – Ես տեսլակ եմ, որ բավականին լուրջ ծրագրեր կան և խմբի կազմը ընդլայնելու, և նոր խմբեր հավաքելու:

3. Բ. – Որո՞նք են համագործակցային ուսուցման մեթոդների, սկզբունքների աղբյուրները:

Մ. Մ. – Ինչ-որ իմաստով մանկավարժական առաջավոր միտքն այս ուղղությամբ է զարգանում: Տարբեր երկրներում տարբեր կարծածներով այս գաղափարախոսությունն իրականացվում է: Զեղիճակային իրավունք ունի Ռուսաստանի Կրթամշակույթի մարզը: Դասարանում էլ կան այս գաղափարախոսության հեղինակներ:

ԱՐՄԱՆ ՄԱՆՈՒՅԱՆ

30 ԿԿԿ Կրթության ազգային ինստիտուտի Գաղափարական և սոցիալ-մշակութային առարկաների բաժնի մասնագետ

Լուսինե Մազակյան – Որքանով հայտնի է, որ Կրթության ազգային ինստիտուտի կողմից գործողվել են ՄԻՄԻ դասընթացի մոնիտորինգ իրականացնելու առաքելությանը: Ի՞նչ նախնական գնահատական կտաք դասընթացի և կիրառվող մեթոդների արդյունավետությանը:

Լուսինե Մազակյան – Դասընթացի աշխատանքները բավականին լավ են կազմակերպված, ժամանակ ընդգրկում է, և արդյունավետությունն ավելի լավ է դրսևորվում: Աշխատանքային այս գործընթացում ուսուցիչները բավականին ակտիվ են: Քանի որ դասավանդվող առարկայի բովանդակությանն ուսուցիչները հիմնականում ծանոթ են, նոր մեթոդը հնարավորություն է տալիս նրանց ավելի մանրամասն ուսումնասիրելու մյուսը անվանական աշխատանքի շնորհիվ միաժամանակ և ծանոթանալով դասավանդվող նոր մեթոդներին, և գործնական ուսուցմանը աշխատելով այս մեթոդներով, ինչն էլ ապահովում է դասընթացի արդյունավետությունը:

Լ. Մ. – Ի՞նչ բացթողումներ և թերություններ են նկատել, որոնք Մարդու իրավունքների հայկական դպրոցը պետք է ուշադրություն դարձնի առաջիկա դասընթացները կազմակերպելու ընթացքում:

Լ. Մ. – Ե՛րևանում ասած, որևէ լուրջ, անհանգստացող կամ ակնհայտ թերություն չեն նկատել, ամեն ինչ լավ է կազմակերպված, տիրում է համապատասխան աշխատանքային մթնոլորտ, ուսուցիչներն ապահովված են անհրաժեշտ գրականությամբ, դասարանում արդյունավետ է ընթանում, և որքանով ինձ հայտնի է, այս օրերի ընթացքում ուսուցիչների կողմից դժոխություններ կամ դիտորդություններ չեն եղել: Դաս վարողները, իրավիճակ մասնագետները բավականին ծանրակշիռ և լուրջ ներդրում ունեցան դասընթացի հաջողության մեջ, և կարծում եմ, որ ծրագրի արդյունավետությունը երաշխավորված է:

Լուսինե Մազակյան – Ինչպես իրեն համարում է, կամ ինչպես ինքն է պատկերացնում: Մեր խնդիրն է ուշադրել լինել և վերահսկել, որ ուսուցիչը ճիշտ յուրացնի և ճիշտ աշխատի այդ մեթոդներով: Ընդհանուր առմամբ բավականին արդյունավետ ուսումնական գործընթաց է տեղի ունենում, ուսուցիչներն անընդհատ ընդգրկված են ուսումնական գործընթացում, և չկա որևէ մասնակցի պասիվ լսողի դերում:

ՎԱՐՈՒՆ ՊԱՐՄԱՅԱՆ 30 ԿԿԿ Կրթության ազգային ինստիտուտի Ճայատարական և սոցիալ-մշակութային առարկաների բաժնի մասնագետ

Լուսինե Մազակյան – Խնդրում եմ ներկայացնել Ձեր մասնակցությունն ու դերը ՄԻՄԻ դասընթացում:

Վարդան Պարսամյան – Ես փորձում եմ 3ՄԻԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին օժանդակել և բովանդակային, և

մեթոդական տեսանկյուններից: Որպես Կրթության ազգային ինստիտուտի աշխատակից, որը զբաղվում է արդի համագործակցային ուսուցման մեթոդների ուսումնասիրմանը և հանրակրթական դպրոցներում դրանց ներդրմանը, 3ՄԻԿ-ի հետ վաղուց եմ համագործակցում, և արդեն մի քանի տարի է, ինչ ՄԻՄԻ-ում ուսուցիչների վերապատրաստ-



ման գործընթացի իրականացումը և համագործակցային մեթոդները: Ես փորձում եմ օժանդակել այդ առումով և տեսնել, թե որքանով են ճիշտ յուրացվում ու կիրառվում մեթոդները:

Լ. Մ. – Որպես համագործակցային ուսուցման առաջատար մասնագետ ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների առաջընթացն այս օրերի ընթացքում:

Վ. Պ. – Դժվար է լիարժեք գնահատել պարզապես կողքի դիտելով կամ ճյուղիկ աշխատանքներին մասնակցելով: Ի վերջո, գնահատման չափանիշը պետք է լինի այն, թե ինչպես են իրենք ուսուցիչներն այդ մեթոդները կիրառում դպրոցում, այսինքն՝ լիարժեք գնահատելու համար պետք է նաև ուսումնասիրել դպրոցում ուսուցիչների կատարած աշխատանքը: Կարծում եմ՝ արդեն իսկ դրական արդյունքներ կան. ուսուցիչները հետ ունեցած գրույցներից ակնհայտ է, որ նրանցից շատերը ողջունում են և պատրաստ են այս մեթոդներով աշխատելու:

Լ. Մ. – Ի՞նչ բացթողումներ և թերություններ են նկատել, որոնք Մարդու իրավունքների հայկական դպրոցը պետք է ուշադրություն դարձնի առաջիկա դասընթացները կազմակերպելու ընթացքում:

Վ. Պ. – Իհարկե, չկան անթերի աշխատանքներ. օրինաչափ գործընթացներ են, որոնք պետք է վերահսկվեն: Տվյալ դեպքում ուսուցիչը պետք է մի կողմից յուրացնի իրավափոփոխության առարկային վերաբերող բովանդակային նյութը, մյուս կողմից յուրացնի նոր մեթոդները և աշխատի դրանցով: Բնական է, որ յուրաքանչյուրը փորձում է աշխատել:



տել այնպես, ինչպես յուրացրել է, երբեմն էլ կարող է ինչպես իրեն համարում է, կամ ինչպես ինքն է պատկերացնում: Մեր խնդիրն է ուշադրել լինել և վերահսկել, որ ուսուցիչը ճիշտ յուրացնի և ճիշտ աշխատի այդ մեթոդներով: Ընդհանուր առմամբ բավականին արդյունավետ ուսումնական գործընթաց է տեղի ունենում, ուսուցիչներն անընդհատ ընդգրկված են ուսումնական գործընթացում, և չկա որևէ մասնակցի պասիվ լսողի դերում:

(շարունակությունը՝ հաջորդիվ)

Հարգարժան պարունայք

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի հարցերով զբաղվող «Հասարակական կազմակերպությունների էկոլոգիական դաշինքը» և ներքոտրոսպորտային հասարակական կազմակերպությունները մտահոգություն են հայտնում երկրի բնական ռեսուրսների շահագործման արագընթաց և մեծածավալ գործընթացների, մասնավորապես՝ Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության և Թեղուտի անտառատարածքը որպես պղծամ-մոլորիթենային հանքավայր շահագործելու առիթով:

Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության և պղծամ-մոլորիթենային հանքավայրի շահագործմանը խախտվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված մի շարք օրենքներ: Մասնավորապես՝

- ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդված



ծր հիմնական հասկացությունների շարքում սահմանում է.

«Այլ հատումներ՝ անտառային տարածքների մասերն են, անտառային ճանապարհների կառուցման, անտառային տնտեսության վարման հետ չկապված՝ օրենքով սահմանված աշխատանքների կատարման նպատակով ծառերի հատումներ»: Այսինքն՝ Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության և պղծամ-մոլորիթենային հանքավայրի շահագործման աշխատանքների հետ կապված անտառների հատումը կարող էր սահմանվել միայն օրենքով, ինչը բացակայում է Թեղուտի պարագայում:

• ՀՀ անտառային օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասում անդրադրված է. «Անտառային հողերի հարակից տարածքներում օբյեկտների նախագծումը, ներառյալ խոնքը, շինարարությունը և գործարկումը պետք է ապահովեն անտառների վիճակի վրա բացասական ազդեցությունների կամիարգելումը», ինչն անտեսվում է Թեղուտի պարագայում:

• ՀՀ «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում ասվում է. «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց արվավայրերի վատթարացմանը»:

• ՀՀ «Բուսական աշխարհի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվում է. «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը»:

• Խախտվում են նաև ՀՀ ջրային օրենսգրքի 74-րդ, 76-րդ, 77-րդ, 80-րդ, 111-րդ, 112-րդ, 116-րդ, 118-րդ և 122-րդ հոդվածների դրույթները (մանրամասնությունները ընթացք տվող է ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը):

Թեղուտի հանքավայրի շահագործման արագացումը խախտվում են նաև միջազգային մի շարք համաձայնագրեր, որոնք ստորագրված է վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային համաձայնագիրը, ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» համաձայնագիրը, ՄԱԿ-ի «Անասնաբուժական ռեսուրսների մասին»

համաձայնագիրը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական համաձայնագրի «Անդրաօվորտային համատեքստում ոչջնակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» համաձայնագիրը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության մասին» համաձայնագիրը, Լանդշաֆտի եվրոպական համաձայնագիրը:

Բնությանը սպառնացող տեխնոլոգիաների արտադրության և օգտագործմանը կապված ռիսկերի նկատմամբ վերաբերյալ միայն մի քանի գնահատականներ:

1. Թեղուտում, գնահատման նախագծում ներկայացված տվյալների հիման վրա կատարված տնտեսագիտական մի հաշվարկի համաձայն, ամբարված է մոտ 20 մլրդ ԱՄՆ դոլարի հարստություն, որի օտարմամբ մեր երկրի պետական բյուջեի հնարավոր մուտքերը շահագործման ողջ ժամանակահատվածում (60 տարի) կկազմեն մոտավորապես 600-650 մլն ԱՄՆ դոլար: Այսինքն՝ մեր ազգային 20 մլրդ ԱՄՆ դոլար արժեքող հարստությունը օտարելու դիմաց ակնկալում են 30 անգամ ավելի քան չհամարժեք ընթացքում հասցվող անդրազնայի վնասումներ ու տեղի համայնքների կյանքի հենարանների՝ հողի և ջրի արտոտումն ու ոչջնակումը:

2. Թեղուտի հանքավայրի շահագործման արդյունքում բնությանն ի պահ են տրվելու տոքսիկ նյութերով հարուստ, հարյուր միլիոնավոր տոննաների հասնող սպասվող վտանգավոր ռիսկերը՝ դրամական տրիլիոններ, որոնցից սպասվող վտանգավոր ռիսկերը՝ դրամական տրիլիոններ և դրանց հիման վրա ապրանքատրոսպորտի կողմից մեր ապագա սերունդների գլխին հարյուրավոր տարիներ:

Համոզված ենք, որ Թեղուտի հանքի շահագործումը հանցագործություն է բնության հանդեպ, քանի որ չեն իրականացվել անվախ ու բազմակողմանի փորձագիտական հետազոտություններ միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից, և չի ներկայացվել բնությանը հասցվող վնասների իրական պատկերը:

3. Շատ է թվեփայլուն սոցիալական խնդիրների լուծման և նոր աշխատատեղեր բացելու առավելությունը: Համեմատության կարգով նշենք, որ վերջերս Հայաստանում 3 մլն ԱՄՆ դոլար ներդրումով բացվեց մոտ 200 աշխատատեղով թղթի ֆաբրիկ վերանախագծման գործարան: Սա անմիտելի ապացույց է, որ մոտ 30 մլն ԱՄՆ դոլար ներդրումով հնարավոր է ապահովել 30 տոկոսով ավելի շատ աշխատատեղ, քան նախատեսվում է Թեղուտի պարագայում:

Փոխարենը, լրատվամիջոցների տեղեկությունների համաձայն, առկա են փաստեր, որ «ԷյՍԻՓի» ընկերությունը գնում է Թեղուտ և Շնող գյուղերի գյուղացիների հողերը՝ 1 մ համար վճարելով ընդամենը 40 դրամ:

4. Ուսումնասիրելով Լեռնաձենապարհ գլխի ինստիտուտի կողմից մշակված և ներկայացված գնահատման և աշխատանքային նախագծերը՝ փորձագետները եկել են եզրահանգման, որ դրանցում բացակայում է անվտանգությունը, կան սխալներ, հաշվարկները կատարվել են գործարարին ձեռնադր մոտեցումներով, օգտագործվել են գների երկակի ստանդարտներ՝

«Այլ անօրեն կանոններ դեռ չեն երևի, որ անհրաժեշտ են գրում»

Եսայի Ժ:12

վնասները քիչ, իսկ օգուտները շատ ցույց տալու համար չեն ներկայացվել գործարարի համար ոչ շահավետ այլընտրանքներ, բացակայում է միջազգային փորձի ներկայացումն ու համեմատական վերլուծությունը, չեն ներկայացվել ծրագրին դեմ արտահայտված կարծիքները:

Իսկ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված դրական եզրակացությունը ոչ մի փորձագիտական հիմք չունի, այլ պարզապես «ԷյՍԻՓի» ձեռնարկության ընդամենը մասնավոր և միակողմանի շահավետ գործունեությանը ընթացք տվող և ՀՀ բոլոր օրենքներն ու միջազգային համաձայնագրերն անտեսող դրսևորում է:

Ամփոփելով եզրակացությունը, որ Թեղուտի հանքավայրի շահագործման ուղղությամբ պետք է իրականացվել խոր, բազմակողմանի և անվախ մասնագիտական ուսումնասիրություններ՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին, և հանրության դատին ներկայացնել միջազգային չափանիշներին համապատասխան գնահատումներ:

Գտնում ենք, որ հանքարդյունաբերությունը պետք է զարգացնել չափավոր, ինտենսիվ և ոչ էքստենսիվ եղանակով: Այսօր Հայաստանում մետաղների կորզման արդյունավետությունը ցածր է: Հիմնական մետաղների կորզման արդյունավետությունը ցածր է: Հիմնական մետաղների կորզման արդյունավետությունը ցածր է:

Թեղուտի հանքի շահագործումը հանցագործություն է բնության հանդեպ, քանի որ չեն իրականացվել անվախ ու բազմակողմանի փորձագիտական հետազոտություններ միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից, և չի ներկայացվել բնությանը հասցվող վնասների իրական պատկերը:

Դեռևս լուծված չէ մաքուր մետաղների ստացման և դրանց հիման վրա ապրանքատրոսպորտի արտադրությունների կազմակերպման խնդիրը, որի արդյունքում կստեղծվեն տասնապատիկ ավելի շատ աշխատատեղեր, քան հանքահանման և հանքավերամշակման ընթացքում: Հայաստանում անարդյունավետ է օգտագործում տնտեսական և արտահանման ներուժը, թուլացնում է իր մրցունակությունը, փոշիացնում է իր, առանց այդ էլ սակավ, բնական հարստությունը՝ մեծ վնաս պատճառելով ներկա տնտեսությանը և ապագա սերունդներին:

Առաջարկում ենք ՀՀ կառավարությանը վերանայել հանքարդյունաբերության վերաբերյալ պետական քաղաքականությունը և ոչ միայն հետևածնել Թեղուտի հանքավայրի շահագործումը, այլև առավելագույնս կրճատել Քաջարանի պղծամ-մոլորիթենային հանքավայրից արդյունահանման ծավալներն ու արագընթաց տեմպերով ձեռնամուխ լինել Հայաստանում պղծմի ու մոլորիթենի առավել խոր մշակման և դրանցից ստաբեր ապրանքատեսակների ստացման ստեղծողիկաների ներդրման աշխատանքներին, ինչը կնպաստի ՀՀ տնտեսության իրական գարգացմանը, մրցունակության բարձրացմանը, արտահանման ծավալների աճին, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, կառավարման նոր մշակույթի ձևավորմանը, ներդրումների խթանմանը: Միայն այս ամենից հետո կարելի է իրականացնել հանքանյութի արդյունահանում ու վերամշակում՝ հումք արդյունահանող երկրից վերածելով ապրանք արտահանող երկրի:

Կոչ ենք անում չլրկնել թույլ զարգացած, հուճեք արտահանող և իրենց պետականությունը վտանգած երկրների ճակատագիրը ու չվտանգել մեր երկրի ապագան:

Գնահատելով Թեղուտի հանքավայրի շահագործման վերաբերյալ Հայաստանի հասարակայնության և մասնագետների շրջանում առկա՝ հանքավայրի շահագործումը

ճախածեղող ընկերության մոտեցումները տարբերվող կարծիքներն ու ներկայումս Թեղուտում, ինչպես տվյալ աշխատատեղերի բացման հնարավորությունները, այնպես էլ բնությանը հասցվող անդամային անխուսափելի վնասներն ու էկոլոգիական աղետները, գտնում ենք, որ սխալ է հանքավայրի շահագործման վերաբերյալ շտապողական որոշում կայացնելը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Հայաստանի հասարակական կազմակերպությունները ռազմավարական առումով անընդունելի և վտանգավոր են համարում ընդերքի նկատմամբ ներկայումս տարվող պետական քաղաքականությունը և անհրաժեշտ են համարում:

• անհասպաղ կասեցնել Թեղուտի պղծամ-մոլորիթենային հանքավայրի տարածքում սկսված աշխատանքները:

• նախաձեռնել անվախ փորձաքննություն հանքավայրի շահագործման արդյունքում երկրի տնտեսական օգուտների և շրջակա միջավայրին հասցվելիք վնասների գնահատման անհաշտ եզրակացություն ստանալու նպատակով:

• վերանայել հանքարդյունաբերությունը որպես Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարական առաջնահերթություն դիտարկելու նպատակահարմարությունը: Այնպիսի խնդիր հրատապության Չեր ընդունումը՝ կոչ ենք անում Չեր նախընտրական օրագրերում և օրագրային բոլոր ելույթների ընթացքում արտահայտել Չեր դիրքորոշումը որպես վերաբերյալ:

Խնդրում ենք նաև Չեր տեսակետի վերաբերյալ զրպարդ տեղեկացնել էկոլոգիական հասարակական դաշինքի համակարգող Սիլվա Արամյանին (հասցե՝ Դարույր Ասակի 7, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտ, հեռ. 281502 կամ (094) 874070), էլ. փոստ՝ ecodashinq\_ecodashinq@yahoo.com):

- Ստորագրություններ.
1. «Ալեխի» հիմնադրամ, Երևան
2. «Արիստ» ՀԿ, Երևան
3. «Բիտոֆիա» ՀԿ, Գյումրի
4. «Բուր» բնապահպանական երիտասարդական կենտրոն» ՀԿ, Երևան
5. «Երևանի մամուլի ակումբ» ՀԿ, Երևան
6. «Էկո-Գրո» ՀԿ, Երևան
7. «Էկոլոգիական կարճեմիա» ՀԿ, Երևան
8. «Էկոլոգիայի ասոցիացիա» ՀԿ, Երևան
9. «Ընդդեմ իրական կամայականության» ՀԿ, Երևան
10. «Թշուշներն են կենտրոն» ՀԿ, Երևան
11. «Թշուշների պահպանման հայկական կենտրոն» ՀԿ, Երևան
12. «Ժողովրդի ասոցիացիա» ՀԿ, Երևան
13. «Ինտերնյու» ՀԿ, Երևան
14. «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ, Կամանոն
15. «Լրագրողների «Ալեխ» ակումբ» ՀԿ, Երևան
16. «Մտքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, Երևան
17. «Կանաչ հանրապետական խորհուրդ» ՀԿ, Երևան
18. «Կանաչ աշխարհ» ՀԿ, Երևան
19. «Կրթության ասպարեզ» ՀԿ, Գյումրի
20. «Հասարակական կազմակերպություն հանուն ժողովրդավարության» կենտրոն» ՀԿ, Երևան
21. «Հայաստանի թշուշների պահպանման միություն» ՀԿ, Երևան
22. «Հայաստանի թշուշները» նախագիծ, Երևան
Եվս 18 ՀԿ:

2008 թ. հունվարի 15 (Ուղերը խմբագրվել և սրբագրվել է խմբագրության կողմից)



# ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀՈՒՇ-ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԷԼԻԶԱ ԳՅՈՒԼԵՍԵՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

Ինչու՞ է սերունդների միջև խզվում կապը: Երբդիտես միմյանց մասին գրեթե ոչինչ չգիտես, երբդիտես աստիճանաբար թուլանում է հոգևորը...



Վերջերս երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում տեղի ունեցավ պայծառ ու կենսախիճը մի մարդու՝ բենական խոսքի լավագույն դասախոսներից մեկի՝ Էլիզա Գյուլայևայի 85-ամյակի օրը:

Չեփչայան: Չեն կարող չհիշատակել նաև նրա վարպետ գործընկերների անունները, ովքեր ուսանողական տարիներից է. Գյուլայևայի կողքին են եղել՝ Սարատ Մարիմոսյան, Ջավեն Տատիցյան, Կիմ Արզումանյան, Ռուլանդա Խարաբյան, Ռաֆայել Զրբաշյան...

Ուսանողական տարիները սովորաբար ամենաերջանիկ, ամենուրեք են, բայց ոչ այդ սերունդի համար: Պատերազմ էր, ծանր էր ոչ միայն կռիվը դաշտում, այլև թիկունքում, ցուրտն ու սովն էլ մի կողմից էին նեղում, մինչդեռ զինվորներին ոգեշնչել, քաջակերել էր պետք: Ուսույ շատ արվեստագետներ շրջում էին քաղաքից քաղաք, ելույթներ ունենում զինվորների համար: Է. Գյուլայևայը հենց այդ տարիներին թիկունքում կատարած անձնուրաց աշխատանքի համար պարգևատրվում է շքանշաններով:

Ինստիտուտում ավարտելուց հետո նրան վստահում են թե դրամատիկ, թե կատակերգական ամենաբարդ դերերը: Անուննաճալուց հետո որոշում է թողնել բեմը՝ նախընտրելով ընտանեկան երջանկությունը, սակայն թատրոնի հանդեպ սերնդն այնքան մեծ էր, որ բեմից հեռու լինելու ցավն ամոքում էր ֆիլմերում ծայնագրվելով: «Շեքսպիր ուղերթ»-ում էլիզան կրկնօրինակում էր Լյուդմիլա Կասատկինային: Երբ Կասատկինան լսում է ֆիլմի հայերեն կրկնօրինակումը, բացականչում է. «Չի կարող պատահել ինձ թվաց՝ ես են հայերեն խոսում»: Երբ տարիներ անց Կասատկինան խաղաց մայր Մարիայի դերը, խնդրեց, որ հայերեն տարբերակում իր ծայրը կրկնօրինակի է. Գյուլայևայը: Սա վկայում է, որ էլիզան փայլուն տիրապետում էր խոսքի տեխնիկային և վարպետությանը, որն իր դասագրքի միջոցով փոխանցել է հաջորդ սերունդներին:

1957 թ. է. Գյուլայևայը մեկնում է Մոսկվա՝ ԳԻՏԻՍ-ում վերապատրաստման դասընթացներ անցնելու համար, իսկ 1958 թ. է. Գյուլայևային՝ որպես բենական խոսքի մասնագետի, հրավիրում են Գեղարվեստա-թատերական ինստիտուտ: Տարիներ անց, երբ Վ. Աճեմյանը կուրս էր կազմում, այն հարցին, թե ով պետք է իր կուրսում դասավանդի, Աճեմյանը պատասխանեց. «Ինչպե՞ս թե ով, պարզ չէ՝ էլիզան»: Աճեմյանի նախկին սանն արդեն նրա հետ լսարան էր մտնում որպես դասախոս: Այնուհետև 33 տարի անմնացորդ նվիրվում է այդ աշխատանքին՝ նաև որպես բենական խոսքի ամբիոնի վարիչ: Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ուսանողներն սկսում են մասնակցել Լեհինգրադում կայանալիք Յախնտովի անվան համամիութենական մրցույթին՝ ամեն անգամ մրցանակներով վերադառնալով Գյուլայևային: Լեհինգրադում երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտը հայտնի էր որպես ուժեղագույն մրցակից: «Դեռ չի եղել այնպես, որ հայերը մեծ ավարով չվերադառնան», - հիացմունքով և «ափսոսանքով» փաստում էին նրանք: Իհարկե, այդպիսի արդյունքի հասնելու գործում մեծ էր է. Գյուլայևայի ավանդը: Իր մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ նա հանդես է եկել նաև գեկույցներով և դասախոսություններով ոչ միայն Գյուլայևային, այլև Սփյուռքում: Դասավանդել է նաև Գյուլայևային կից գործող ստուդիայում...

առ այսօր հայերեն բենական խոսքի միակ դասագիրքն է: Արդեն քսան տարի եթՎԳԻ ուսանողներն առաջնորդվում են այդ գրքով, որը մեծ հեղինակություն է վայելում նաև Սփյուռքում: Դասագրքի մասին ժամանակին դրվատանքի խոսքեր են ասել լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը, պրոֆեսոր Վարդան Աճեմյանը, պրոֆեսոր Գեորգ Մայրանը...

Է. Գյուլայևային ուսուցանել, կրթել է մի քանի սերունդների և դեռ շատերին կարող էր դասավանդել... 1992 թ. սեպտեմբերի 1-ին եթՎԳԻ ուսանողները հրաժեշտ տվեցին սիրելի ուսուցչին: Նրա սաներից շատերն այսօր թատրոնի և կինոյի կարկառուն դեմքեր են, Գյուլայևայի Գեղարվեստա-թատերական ամբիոնի արվեստագետներ՝ Աստղիկ Գևորգյան, Զակար Ազիզյան, Անդրանիկ Գարությունյան, Արմեն Սելիքեթյան, Վահե Շահինյան...



Ելույթների 85-ամյակին նվիրված հուշահամերգը:

Միջոցառումը մեծ խորհուրդ ուներ՝ թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողությանը և ընդհանրապես նոր սերունդին ներկայացնել ինստիտուտի երախտավորների գործունեությունը: Իր պատմության վաթսուներորդի ընթացքում ինստիտուտում դասավանդելու ու դասավանդում են համաճարտարվեստագետներ ու գիտնականներ, որոնց պարտավոր ենք հիշել և երաստագիտության ու խոսքի արվեստագետներով պատվել նրանց:

Է. Գյուլայևայի ավանդը մեծ է հայ բենարվեստի գարգացման գործում: Գեղարվեստագետներ ավարտելով դպրոցը՝ ծայնային փայլուն տվյալների շնորհիվ միանգամից ընդունվում է կրմներվատորիայի վկայ բաժինը, բայց չի հասցնում համախել դասերին, քանի որ հենց այդ ժամանակ տեղեկանում է, որ Վարդան Աճեմյանը դերասանական խումբ է կազմում: Սեկ ամիս անց էլիզան արդեն Վ. Աճեմյանի ուսանողուհին էր: Դա ինստիտուտի առաջին դերասանական խումբն էր՝ Մետաքսյա Սիմոնյան, Զեդինե Զովհաննիսյան, Զովակ Գալոյան, Գևորգ



վերջյան, Արմեն Խանդիկյան, Ազատ Գասպարյան, Աշոտ Ղազարյան, Ռաֆայել Զորանյան, Գարություն Սովախյան, Լուսինե Կիրակոսյան, Ռոբերտ Գարությունյան, Լևոն Շարաֆյան...

ՄԱՐԻՆԵ ՄԱԽԹԱՐՅԱՆ  
դերասանուհի, եթՎԳԻ-ի դասախոս

### Մեր կյանքում

### ՆԱԽՊԱ ԴԵՊՄԱՆՅԱՆ

#### ԲԱՐԵՆՈՍ ԵՂԻՐ

Սիրելույս խորան  
Եվ վառվող կանթեր...  
Մոլորք արարող  
Կուսական շուրթեր...

Ի՞նչ են մրմնջում  
Շուրթերն այդ մաքուր,  
<<Ով սուրբ, մայր Սարգիս,  
Ինձ իմ կենդ տուր>>:

Բարեխոս եղի  
Պսակիս համար,  
Տուն իմ միակին՝  
Քո կամքին հարմար:

Բայց որ չափստաս,  
Սիրուս չցավի,  
Թեկուզ դարձ անցնի,  
Բնավ չդավի:

#### Սուրբ Սարգիս զորավարի տոնի և Երեսասարգների օրհնության օրվա առթիվ

Թող հաղորդ լինի  
Բարուն ու լավիս,  
Նաև իմ վշտին՝  
Ու կրած ցավին:

Եռագահան էս,  
Չորաց պահասալս,  
Խոսքս երկինք տար՝  
Ելելով անխափան:

Շտրիկի դու ինձ  
Բարեպաշտ մի այր,  
Տունս դարձրու  
Ձերս դրախտավայր:

Սիրելույս խորան  
Եվ վառվող կանթեր...  
Սրտում արարվող  
Մոլորք մի անմեղ...



ՆԱԽՊԱ ԴԵՊՄԱՆՅԱՆ  
Վասնդուրի «Բյուրակ»  
լրբահամալիրի ուսուցչուհի

# Հոգեկոտ

## ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔ Է...

«Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Ղուկաս 17:10)

Տերը բացատրում է խոնարհության գաղտնիքը: Հարստությունն է մարդուն աստանայակերպ դարձնողը, քանզի աստանան ինքը, չլինելով այդպիսին, հպարտության պատճառով դարձավ ասպետաց, բարձունքից զահավիժած, Աստծուց հեռացած՝ իր ետևից տանելով բազմաթիվ իրենցականների, որ դևեր կոչվեցին:

Եզոնի կողքացին ասում է, թե աստանան դեռ ոչինչ չգիտեր մեղքերի մասին՝ բացի հպարտությունից: Հետևաբար՝ մարդուն աստվածատեսությունից, լուսինից զրկելու առաջին քայլը հպարտությունը պետք է լինի: Հպարտությունը կործանեց մարդուն՝ նրա հավիտական կյանքը վերածելով մահվանացու գոյության, սուրբ երթյունը դարձնելով մեղքերի հանդեպ խոցելի, առողջ ու կատարուկերով՝ հիվանդ:

Հպարտությունը չի ճանաչում սահմաններ՝ ոչ հարուստ և ոչ աղքատ, ոչ շնորհալի և ոչ էլ սպաշնորհ: Ամեն մեկը, իր մեջ հպարտության փառավորությունը, Աստծուց հեռանում է: Ուստի մարդկային կյանքը շտկելու, մեզմիջ հպարտությունը վաճելու համար մի գաղտնիք է բացում Տերը՝ պատճենելով մի առակ: Ասում է՝ ո՛վ է, որ իր ծառայի հետ կնատի հացի: Մի՛ թե

տուն գալով՝ նա չի ասի՝ նախ պարտատիր, ինչ որ ուտելու եմ, հետո ինքը կնատեմ հացի: Մի՛ թե տերը շնորհապարտ կնամ այդ գործը կատարող ծառային: Կսիրի՛ր, բայց շնորհապարտ չի մնա: Այդպես էլ, ասում է, դուք մեք: Մի՛ ասեք, թե ես շատ ավելին արեցի, այլ միշտ մտածեք, թե անպիտան ծառաներ եք, ինչ որ արեցիք, պարտավոր էիք: Սա խոնարհության բանալին է, որ յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ջախջախելու հպարտությունն իր բնի մեջ, կործանելու նրան հենց այն խաչով, որ Քրիստոս տվեց մեզ:

Աստված յուրաքանչյուրին է հրահանգում խոնարհություն, մինչդեռ շատերը ոչ միայն չեն պահպանում այդ պատվիրակը, այլև կոխկռտում են այն: Արդե՞հայ միշտ հիշենք, որ աղոթքն անզավ փոխի բարբառենք այսպես. «Ո՛վ Տեր, այս պահին անզավ ապաշխարություն հասնա՛րիք, քանզի մարմինս հոժար է: Ես ստիպում եմ, որ խոնարհություն ցուցանեմ, որպեսզի անզավ դա հպարտություն չլինի, թե աղոթել գիտեմ»: Հենց այստեղ է ծաղրական սերը, բարձրանում՝ օրհնակ պատուներով զարդարվելով: Ստորտուն խոնարհության բանալին է: Նշանակում է՝ մարդկանց հանդեպ խոնարհ լինելով բո-

լորս մեկ ամբողջություն ենք դառնում: Եթե իբրև մեկ ամբողջական մարմնի անդամներ խոնարհաբար չծառայենք միմյանց, այդ ամբողջական մարմինը կկազմալուծվի: Նշանակում է՝ մեր ընդհանուր կյանքի կենցաղավարությունն է, որ պետք է շտկենք քրիստոնեաբար: Քրիստոնեաբար արարելով ծառայում ենք եկեղեցուն, աշխատավայրում չենք ստուն, ազնիվ ու առողջ ենք պահուն մեր շրջապատը, մարմնի մեր բաժինը, որպեսզի ամբողջ մարմինը տկար չլինի:

Ուրեմն՝ կյանքի ընթացքում պետք է առաջնորդվել ոչ թե նրանով, թե Աստված որքան շնորհներ է տվել, այլ հիշել՝ որքան տվել է, այդքան էլ պահանջելու է: Հենց այս խոնարհությամբ պայծառեցնենք մեր շրջապատն ու եկեղեցին:

Թող Տիրուց սուրբ հոգին այդ խոնարհության գիտակցությունը, ծառայության մեջ կայստա պահի մեր մեջ, գործացի սուրբ եկեղեցին՝ Քրիստոսի սերունդ շնորհը հաստատելով ամենքիս մեջ: Ամեն:

ՏԵՐ ՎԱՐՆԱ ՔԱՅԱՍԱ ԱԶԱՐՅԱՆ  
Վանաձորի Ս. Գր. Նարեկացի  
առաջնորդաբան տեղեկոց: քահանա

Հոգեվոր ՏՈՒՆՑՈՒՅՑ  
Հունվարի 6 - ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՆԻ ԵՎ  
ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ  
Հունվարի 13 - Ամվանակոչություն  
Հունվարի 19 - Ծնունդ Սուրբ  
Հովհաննես Կարապետի  
Հունվարի 21 - Սուրբ Սարգիս  
Հունվարի 22 - Երեմիայի  
օրհնության օր  
Հունվարի 28 - Առաջավորաց  
պահի Բարեկենդան  
Հունվարի 29 - Սուրբ Ղուկաս  
Հունվարի 31 - Սուրբ Վարդանանք

### ԲԱՐԵՂԱՇՏ ԲՐԻՍԱՏՈՆՅԱ

#### Անվանակոչություն

Ամվանակոչությունը խորհրդարանական երևույթ է՝ հավասարազոր օծանքը. «Կոչումն է կանոնադրական անունը»: Հայաստանյայց առաքելական եկեղեցու Տերունական անշարժ տոներին է Հիսուս Քրիստոսի Ամվանակոչության տոնը:

Ըստ Ղուկաս ավետարանչի՝ մարդեղացյալ Աստվածորդուն նրա ծննդյան 8-րդ օրը Հովսեփն ու Մարիան Աստվածածինը տանում են տանձը՝ Աբրահամի և Աստծո միջև դրված ուխտի (ԾՃՈՒ, 17.4-14) համաձայն քվիտելու: Թվապատյան ժամանակ մանկան անվանում են Հիսուս (եբր. բառ, որ նշանակում է փրկիչ): «Եվ երբ ուր օրերը լրացան, և նա թվապատեց, նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես իրենցական կողմից կոչվել էր, երբ դեռ չէր իրագրվել մոր որովայնում» (Ղուկ. 2.21):

Սվիրական ավանդույթի համաձայն՝ մկրտության ժամանակ խորհրդակատար քահանան մկրտվողին տալիս է նոր անուն, քանի որ մկրտության սուրբ ավագանից վերստին ծնված այն նոր մարդ է:

Հայ եկեղեցու հայրավանդ կանոնների համաձայն՝ քահանայանյալ ցանկացողի ծեռնադրության խորհրդի ժամանակ ծեռնադրող և սրբալույս մյուռոնով օծող եպիսկոպոսը շնորհում է նոր անուն:

#### Մուրեց Սուրբ Հովհաննես Կարապետի

Սուրբ Հովհաննես Մկրտիչը, ըստ քրիստոնեական մատենագրության, վերջին մարգարեն է, ով կանխավեսել է Մեսիայի՝ Հիսուս Քրիստոսի գալուստը, առաքյալներից առաջինը, ով բարոցել և իրագործել է Քրիստոսի վարդապետությունը, Հորդանանում մկրտել Հիսուսին:



Ավետարանները (Մատթեոս 11.10, Մարկոս 1.2) հաստատում են, որ հինկտակարանային մարգարեությունները՝ «Ահա ես ուղարկում եմ իմ պատգամաբերին, և նա կտեսնի իմ ճանապարհներն իմ առաջ» (Մատթեոս 3.1), «Անապատում կանչողի ծայցն է. «Պատասխանեց Տիրուց ճանապարհը և հարբեց մեր Աստծու շավիղերը» (Եսայի 40.3, Մատթ. 3.3), իրականացվում են Հովհաննես Մկրտչի միջոցով: Ըստ տրայան, մարգարեական այս կանխասանումների հետ է անդելգիորեն կապված Հովհաննես Մկրտչի «Կարապետ» անվանումը: Այն բնորոշում է Հովհաննես Մկրտչին՝ իբրև Քրիստոսի տժժրհանական գործունեությունը նախապատրաստող մարգարեի կամ առաքյալի:

## ՊՐԻՊՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ. «ՊԻՔ ՀԱՐՅԱՆՆՅ»

ՆՆՈՒ՝ ԵՆ ՈՍԱՔ ՄԵՇՍՏՈՒՆ, ՈՍԿ ՈՍԱՔ՝ ԱՐՅԱՆ

Մարդու հարստությունը չորս պատճառներով է գոյանում.

1. որպես վաստակի արդյունք
2. գրվածքի և հավիտանությունից
3. դիպվածից
4. տուրքով Աստծուն՝ համաձայն այն խոսքի, թե «Տերն աղքատացնում է, և Տերը բարձրացնում է»:

Եթե Աստված է շնորհուն ունեցվածքն ու բարեկեցությունը, դարձյալ առաքել պատճառներով է տալիս:

Եթե բարի է մարդը, Աստված ընտրում է նրան և ապահովում բարեկեցությամբ, որպեսզի կարողանա զբաղվել և այս կյանքով այն կյանքը շտկի:

Եթե չար է մարդը, Աստված հարստացնում է նրան, որ դատաստանի օրը չափի, թե ին՞՞ն է տվեցիր, որ քեզ սիրի:

Չարասիրտ մարդուն հարստություն է տալիս նաև այն պատճառով, որ այդ ինչ

քով դառնա Աստծուն՝ մտքում ասելով. «Ես անարժան եմ, սակայն Աստված ինձ ունեցված տվեց: Նրա պատվիրանները պահեն, զուցե արժանանամ նաև խոստացված կյանքին»:

Բարեկեցությամբ է ապահովում հոգուն բազում չարից և բարության փշրանքներ ունեցողներին: Այդ սակավ բարիքն այս աշխարհում է տալիս՝ առանց դատաստանի օրը բարի աչք ունենալու, որով հետև մեծահարուստ էլ բարիքը միայն այս կյանքի համար ընդունի:

Ինչպես որ հարստությունն է տարբեր պատճառներով գոյանում, այնպես էլ այն բաժանությունն իր հիմքերն ունի.

1. ծուլություն
2. հարստությունից ինքնակամ հրաժարում՝ հանուն Քրիստոսի
3. դիպված
4. Աստծո կամքով

Աստծո կամքով մարդուն տրվող աղքատությունը և պատճառներ ունի: Աստված ունանց արքայն է դարձնում, որ արքայությունը մեծահարուստներին վաճանեն. «Քեանի ով ողորմում է աղքատին, փոխ է տալիս Աստծուն»: Ինչպես ոսկին է փորձվում հրով, այնպես էլ Տերն է մարդուն աղքատությանը փորձում՝ պարզելու՝ մարդի ունեցվածքի՞ համար է սիրում իրեն, թե՞ աղքատությունն ի զորու չէ նկատեցնելու սերն առ երկնային Տերը, ինչպես Հորի պատմությունն է վկայում: Աստված աղքատության մեջ է նետում այն մարդուն, ով մեղքեր է գործել, որպեսզի շարժարանով հատուցի այդ մեղքերի համար, ապաշխարի և դառնա երկնային կյանքի սուրբ և արժանավոր ժառանգորդը:

Գրեցի հատվածը փոխադրեց  
ԽՈՒՐԵՆ ԱՐԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

### ԲԱՐԵՂԱՇՏ ԲՐԻՍԱՏՈՆՅԱ

#### Արքայապետների խորհուրդը

Արքայապետները որպես քրիստոնեական հոգևոր մշակույթի գեղարվեստական մտածողության արգասիք՝ զարգացել է պաշտամունքի կանոնի զուգընթաց՝ համապատասխանելով վարդապետական և դավանաբանական ձևակերպումներին: Հայ եկեղեցուն արքայապետներ են համարվում առաջին հերթին այն գեղարվեստները, որոնք պատկերում են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Աստվածամորը և սրբերին: Այս արքայապետները գարդարում են ս. Սեղանը, եկեղեցու դասի, տաճարի և զավթի որմերն ու սյուները: Այդ արքայապետների առաջ մենք սովորաբար մոմ ենք վառում և աղոթում:

Համաձայն եկեղեցու արքայական ավանդության՝ առաջին արքայապետներն են Հիսուսի՝ խոստանալը և Աստվածամոր պատկերը, և խորհրդանշական է, որ այս երկու Վճիռական պատկերները ժամանակին պատկանել են հայ եկեղեցուն: Խիստ կարևոր է արքայապետի իրապատկան ղեկը. այն զգաստության և ապաշխարության կոչ է՝ ուղղված մեզ:

Արքայապետները եկեղեցու և եկեղեցական ծիսակարգի անբաժանելի մասն է: Նա կարևորագույնն է պաշտամունքի ընթացքում օգտագործվող բոլոր ծիսական առարկաների մեջ, քանի որ արքայապետների գոյաբանական հիմքում ընկած է Հիսուս Քրիստոսի գերբնական մարմնավորման անճանախի իրողությունը:

Աստված Հոգի է, այսինքն՝ Նրան անհնար է նկարագրել, բայց երբ նա մարմն է առնում, վերցնում և Իրեն է միացնում մարդկային բնությունը, որով ձեռք է բերում նաև նյութական կերպար, հնարավոր է դառնում Նրան պատկերել: Այսինքն՝ հոգևոր երթյունն արտահայտվում է զգայական կերպարի մեջ և միջոցով: Տեսնելով պատկերը՝ մենք մտովի դիմում ենք պատկերվածին: Տարբերություն ենք արքայապետների առջև, պետք է հստակ գիտակցենք, որ մի աղոթքն ուղղված է ոչ թե պատկերին, այլ այն անձին, ով առկա է պատկերի վրա:

Ի վզբանե հայ եկեղեցին եղել է պատկերախորհրդ: Ամեն մի արքայապետ գոր-

ծածելի է դառնում եկեղեցուն միայն հատուկ կարգով օրհնվելուց ու օծվելուց հետո:

12-րդ դարում Հովհաննես սարկավազ Վարդապետը բանաձևել է հայ եկեղեցու ուսմունքը արքայապետների վերաբերյալ հետևյալ կերպ. «Արքայապետներն օգնում են հավատացյալներին մերձենալու Աստծուն»: Քրիստոսի պատկերի առջև պետք է խոնարհվել, խոնարհվում, սակայն, ուղղված է ոչ թե արքայապետների նյութին, այլ նույն Ինքն Քրիստոսին: Աստվածածին և սրբերի պատկերների առջև նույնպես պետք է խոնարհվել, սակայն այդ խոնարհումը ոչ թե Աստվածածինն ու սրբերին է ուղղված, այլ Քրիստոսին, քանի որ Աստվածամայրը և սրբերը միայն միջնորդ կարող են լինել մեզ համար Քրիստոսի առջև:

«ՔՐԻՍՏՈՆԵՆԿԱՆ» ԳՐԻՑԻ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Յ Թ - Ա Ձ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԻՄ ԲԱԺԻՆ ԲԱՐԸ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՅՔ ԸՆՆՔԻՆ

Վանաձոր քաղաքի կենտրոնական պողոտայի (Տիգրան Մեծի 1) վրա կառուցվելու է Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը:



Այս տարի կմեկնարկի շենքի շինարարությունը, որին իր աջակցությունը կարող է բերել յուրաքանչյուր ոք՝ իր բաժին քաղո (ընդամենը 250 դրամ) ղեկավար շենքի պատին: Հիմնադրամարդու իրավունքները համընդհանուր բնույթ ունեն: Եվ Մարդու իրավունքների շենքն էլ համընդհանուր ջանքերով կկառուցվի:

Նոր պատառիներն են՝

- 1. Լիլիթ Կիրակոսյան, ք. Գյումրի (40 քառ՝ 10.000 դրամ)
2. Դանիել Կարապետյան, ք. Վանաձոր (2 քառ՝ 500 դրամ)
3. Ավետիսյան Մատիսյան, ք. Վանաձոր (2 քառ՝ 500 դրամ)

ՀՍԿԻ նախագահության, աջխատակազմի և շահառուների անուկից շնորհակալություն ենք հայտնում Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար: Մի՞թե շենքի կառուցման համար անհրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քառ:

ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է 233 քառ
ՄԱՑՆԵԼ Է 1.763.287 քառ

ԸՆՏՐԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՑՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԼՈՌՈՒ ԽԱՐԶՈՒՄ

2008 թ. փետրվարի 19-ին տեղի կունենան ՀՀ նախագահական ընտրություններ:

Ուստի ընտրական գործընթացներին ընտրողներին իրազեկելու համար «Ընտրողի բո ապագան» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Սոցիալ-տնտեսական և իրավական բարեփոխումների կենտրոն» հասարակական կազմակերպությունը Լոռու մարզի հինգ գյուղերում՝ Մարգահովիտ, Վահագնի, Լեջան, Գարգառ, Օձուն, և Ախթալա քաղաքում ստեղծել է ընտրական-տեղեկատվական կենտրոններ: Դրանք գործում են տեղական երիտասարդական ակումբների և համայնքային հանձնաժողովների գրասենյակներում: Ծրագրին աջակցել են «Counter part international» կազմակերպությունը և «Կարողություն և զարգացում քաղաքացիական հասարակության» հասարակական կազմակերպության նախագահ, երիտասարդության և համայնքների գործողությունների Լոռու մարզային համակարգող Լուսինե Մինոնյանը:

Կենտրոնի աշխատանքներին ծանոթանալու և բնակիչներին իրազեկելու համար օրերս գրուցեցինք Մարգահովիտի

տի կենտրոնի պատասխանատուներ Սիլվա Ջոհանյանի և Այուզաննա Քևորգյանի հետ:

«Այցելուները հիմնականում երիտասարդներն են և նրանք, ովքեր փետրվարի 19-ին առաջին անգամ ընտրության միջոցով արտահայտելու են իրենց քաղաքացիական դիրքորոշումը»,- նշեցին գրուցակիցներս:

Վահագնի գյուղի երիտասարդական ակումբի փոխնախագահ Սվետա Այվազյանից տեղեկացանք, որ կենտրոնի գոյությունը մեծ ոգևորություն է առաջացրել վահագնեցիների շրջանում: «Բնակիչներն այցելում և այստեղ ստանում են իրենց հարցերի պատասխանները»,- ասաց նա:

Մյուս կենտրոնների պատասխանատուները ևս կարևորեցին իրենց կենտրոնի աշխատանքները՝ հավաստելով, որ այն որևէ թեկնածուի համար քարոզչություն չի իրականացնում և կոչված է տեղեկատվություն տրամադրել ընտրողներին, ինչը կնպաստի մեր երկրում արդար ու ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿՎՐՅԱՆ

«Վասն արդարության» իրավական գիտամեթոդական հանդեսը իրավիկում է իրավագետ գիտնականների, դասախոսների, բարձր կուրսերի ուսանողների՝ իրավունքի, մարդու իրավունքներին առնչվող թեմաներով գիտական, վերլուծական հոդվածներ ներկայացնել:
Գիտականության չափանիշներին համապատասխանող հոդվածները կտպագրվեն հանդեսում՝ պարզևսարվելով հոնորարներով:
Հոդվածները կարելի է ուղարկել հանդեսի խմբագրությանը հետևյալ հասցեով՝
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ gmanoukian@acrpc.am; lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am

Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում գործող Եվրոպական կենտրոնական համալսարանը 2008 թ. հուլիսի 7-11-ը կազմակերպում է ամառային դասընթաց «Իրավունքի, Մարդու իրավունքների և էթիկայի ուսուցումը» թեմաներով:
Դիմել կարող են մարդու իրավունքների և կրթական բարեփոխումների ոլորտում հիմնական գիտելիքներ և 1-2 տարի դասավանդման փորձ ունեցող իրավագիտության կրտսեր դասախոսներ, ինչպես նաև այլ հետաքրքրված հետազոտողներ: Դասընթացի անցկացման լեզուն անգլերենն է: Մասնակցության վճարը կազմում է 250 եվրո: Հնարավոր է նաև ֆինանսական աջակցություն:
Ֆինանսական աջակցության հայցման դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն է 2008 թ. փետրվարի 14-ը, իսկ մյուս դիմորդների համար՝ 2008 թ. ապրիլի 30-ը:
Դասընթացին վերաբերող ցանկացած այլ տեղեկություններ կարող եք գտնել
www. Sun.ceu.hu/teaching-law կայքէջում:

Հանուն իրազեկված քաղաքացու և ընտրողի Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Քաղաքացիական նախաձեռնությունների ազատ ամբիոն և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտեի հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերով 2008-ի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին ընդառաջ, ՀՀ քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել է «Իրավական նախաձեռնություն. ընտրություններ 2008» ցանցը: Այս նախաձեռնության նպատակն է քաղաքացիներին տրամադրել անվճար իրավաբանական խորհրդատվություն և պաշտպանություն: Հունվարի 15-ից մարտի 15-ը ընկած ժամանակահատվածում կզորի հեռախոսային անվճար թե՛ գիծ՝ 080-080-804: Յուրաքանչյուր քաղաքացի, այդ թվում՝ դիտորդ, վստահված անձ, ընտրական հանձնաժողովի անդամ, այս հեռախոսահամարով զանգահարելով կարող է իրավաբանից սպառիչ պատասխան ստանալ ընտրություններին վերաբերող և իրեն հուզող հարցերի վերաբերյալ: Իսկ քվեարկության օրը ողջ հանրապետության տարածքում շրջելու են 40 «Իրավական շտապ օգնության» մեքենաներ՝ իրավաբան, քաղաքացիական ակտիվիստ, դիտորդ, ցանկության դեպքում՝ լրագրող անձնակազմով:
«Իրավական նախաձեռնություն. ընտրություններ 2008»-ի նախաձեռնողները պատրաստ են քաղաքացու ցանկության դեպքում նրա իրավունքների պաշտպանությունն ապահովել նաև դատարաններում, ընդհուպ մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Քաղաքացիներին տրամադրվող իրավական օգնությունն անվճար է: Առավել մանրամասն՝ www.hra.am կայքէջում:

Թերթը իրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Դ տարի
Հիմնադրի և Իրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրք., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am
Գլխավոր խմբագրի պաշտոնակատար՝ Գևորգ Մանուկյան
Խմբագիր՝ Զերմինե Բաբոյան
Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան
Ըղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակների չեն վերադարձվում: Մեքենաներ անհետ կամ արտատպելիս հիղումը «Իրավական մշակույթի» պատճառով է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2008 թ. 01.28:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «21-րդ դար-97» հրատարակչատանը:
Իրավական մշակույթ
Legal Culture
Православная культура
Տարածվում է անվճար